խափանարար ։ Հայք բաժանորդ էին հիւսիսային դրան Աւրին՝ և հարկ էր տալ նոցա զմի բանալի նորին , այլ ոչ ետ , և դուռն արեւմտեան 'ի կողմն հիւսիսոյ յատաջադոյն սեփհական տուեալ էր մեզ , յետոյ կամօք և հաճութեամբ իւրով բաժանորդ արար՝ տուեալ երկաքանչիւրոց մինմի բանալի · յեկեղեցին Բեթղեհէմի չեն միայն 2 դրունք , այլ՝ 10 'ի ներքս և յարտաքս , յորոց 2 'ի ձեռս Լատինաց , եւ այլոց տիրեալ են Յոյնք , եւ մի բանալի արեւմտեան դրան 'ի ձեռս Հայոց ։ Յոյնք ասեն թէ՝ իրաւունք բաժանորդութեան կատարեցաւ 'ի ժամանակս Նուրի Էֆէնտեայ , սակայն չէ այդ ճշմարիտ · թէպէտ 'ի թուականին յայնմիկ եղեւ կազմութիւն բաժանորդութեան հաճութեամբ երկուց կողմանց , այլ ոչ եղեն բանք և քանակութիւնք պատկերաց և կանթեղաց , զի ոչ էր կարգեալ նա լինել լուսաբար , այլ գործադրիչ հրովարտակի բաժանորդութեան և բարձող խառնութեան , որպէս և 'ի Հէօճմէթին որ եղեւ 'ի ձեռն նորին՝ չիք թիւ և քանակութիւն կանթեղաց և պատկերաց ։ Նուրի Էֆէնտի միով հրովարտակաւ երկուց տեղեաց բաժանորդ արար , եկեղեցւոյն Բեթղեհէմի եւ դերեզմանի Ս · Աստուածածնի , զի որպէս գործադրեցաւ բաժանորդութիւնն դերեզմանի Ս · Աստուածածնի , նոյնպէս եղեւ և եկեղեցւոյն Բեթղեհէմի , և հիւսիսային կողմն յատկացաւ Հայոց · զի որպէս Յոյնք 'ի յատկացեալ տեղիս իւրեանց ըստ պահանջման հարկին և ժամանակին յաւելուն և նուազեն զթիւս կանթեղաց և պատկերաց իւրեանց , հարկ է նոյնպէս առնել և Հայոց 'ի յատկացեալ տեղիս իւրեանց , զի 'ի ժամանակս արդարասէր Իշխանին մերոյ մի ոք լիցի արդել և խափան , խելամուտ լինել պարտ է 'ի վերայ պարագայիցս այսոցիկ՝ զի չէ արդարութիւն և վայելուչ մարդկութեան ընդ միշտ վիճել Յունաց ընդ ազգին Հայոց ։

Նիստ Երկրորդ ։

Բաղաքապետն ասէ՝ որովհետեւ կախեալ իրքն յեկեղեցին Բեթղեհէմի ըստ արամադրութեան հրամանագրոյն և հրովարտակին բաժանորդութեան եղեալ է 'ի ձեռն նախ-